ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/48
որոշման չկատրման վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

- 27-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

- 28-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրում է ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվություն՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Անձը այն հրապարակում է տեղեկագրում:

- 29-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 28-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

«Արհովշին» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին ներկայացվել է բողոք:

ք. Երևան, Կոմիտաս 54 բ, հեռ. (+374) 11 28 93 25, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 07.04.2020թ.-ին:

08.04.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/48 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.05.2020թ.-ին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 07.05.2020թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/48 որոշմամբ որոշել է՝

1. «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/48 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետը և ընդունել «Գայսաթ» ՍՊԸ-ի հայտն 1-ին չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում,

- մասնակի դադարեցնել՝ «Գայսաթ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասով 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 1-ին ենթակետը,

- դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 2-րդ ենթակետը,

- ընդունել «Արհովշին» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարելու մասին որոշում:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացվել Կարգի 28-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ կայացված իրավապարտադիր որոշման կատարման մասին:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

ք. Երևան, Կոմիտաս 54 բ, հեռ. (+374) 11 28 93 25, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru